

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՊՐՈՖՏԵՍՏ ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2022/16-23-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
4	Solitare	Medtronic	<p>Նախատեսված է սուր իշեմիկ ինսուլտի ժամանակ արյան հոսքը վերականգնելու նպատակով, գլխուղեղի խցանված անոթներից թրոմբի հեռացման համար: Սարքը նախատեսված է հետևյալ նեյրովասկուլյար համակարգերում օգտագործելու համար- ներքին քնային զարկերակներ, M1 և M2 հատվածներ, բազիլյար և ողնաշարային զարկերակներ: Գործիքի միջոցով հնարավոր է իրականացնել միջամտություններ 2.0-4.0 մմ և 3.0-5.5 մմ տրամագծով անոթներում: Կախված միջամտության առանձնահատկություններից հետևյալ չափերի պարտադիր առկայություն՝ երկարություն 20 և 40մմ - 4.0մմ տրամագծերի դեպքում և 20, 24 և 40մմ երկարություն 6.0մմ տրամագծերի դեպքում: Սեղմող լարի երկարությունը՝ 180 սմ : Միկրոկաթետերի նվազագույն ներքին տրամագիծը՝ 0.5մմ (4.0մմ տրամագծերի դեպքում) կամ 0.7մմ (4.0մմ տրամագծերի դեպքում): Դիստալ մասը և սեղմող լարը կազմված են նիթիևոլից: Գործիքի մակերևույթին, դիստալ և պրոքսիմալ հատվածներում տեղադրված են ռենտգենոկոնտրաստ Pt/Ir մարկերներ: Ընդ որում դիստալ հատվածում</p>

			<p>տեղադրված է նվազագույնը 3-4, պրոքսիմալ հատվածում նվազագույնը 1, իսկ գործիքի մակերևույթին՝ նվազագույնը 3 շարքով (20 և 24մմ երկարությունների դեպքում) և 5 շարքով (40մմ երկարության դեպքում) 3 ական մարկեր: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK որակի վկայականի առկայությունը պարտադիր է: Նոր է, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառում է տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ի առկայություն: «Բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում գլխուղեղի սուր և/կամ ենթասուր իշեմիկ կաթվածների թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբեկտոմիա ծառայությունների մատուցման նպատակով ձեռք բերվող ապրանք:</p>
--	--	--	--

